ՀՏԴ 711.4:379.85

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ա.Ս. Քարամյան

ԼԵՌՆԱՅԻՆ ԳՈՏՈՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Դիտարկվում են լեռնային թույլ յուրացված գոտիները քաղաքաշինական կազմակերպման և ճարտարապետական զարգացման միջոցով դրանց ինտենսիվ կառուցապատված գոտիներին ինտեգրելու խնդիրները: Զբոսաշրջության զարգացումը, որպես տարածական միջավայրի զարգացման կարևոր գործոն, մեծ խթան կարող է հանդիսանալ Հայաստանի՝ լեռնային երկրի, ծայրամասերի քաղաքայնացման և արդյունավետ օգտագործման ռազմավարության իրականացման հարցում:

Առանցքային բառեր. *թույլ յուրացվածություն, ինտենսիվ զարգացում, բարձր լեռնային գոտի, բնական և մշակութային ժառանգություն, լեռնային լանդշաֆտ, կլիմայաբուժություն, ճարտարապետական հուշարձաններ*

ՀՀ կենտրոնական հատվածում գտնվող Եղեգիս գետի երկայնքով ձգված քաղաքաշինական թույլ յուրացված և բնակեցման ցածր խտությամբ գյուղական, ինչպես նաև որոշ լքված բնակավայրերում առկա է վաղ, զարգացած և ուշ միջնադարի ճարտարապետության, պատմության ու մշակույթի հարուստ ժառանգություն: Այս տարածքները դժվարամատչելի են (հիմնականում ծովի մակերևույթից բարձր են ավելի քան 2000 *մ*) բնակելի կառուցապատման համար, սակայն խիստ գրավիչ այլ նպատակներով զարգացնելու և օգտագործելու դեպքում: Հաշվի առնելով բնական և մշակութային հարուստ ներուժը, արդյունավետ կարող է լինել զբոսաշրջության զարգացումը Վայոց-Ձորի մարզում՝ որպես մեր երկրում ամրագրված գերադասելի ուղղություն [1]:

Գետահովիտներով, սարավանդներով, զառիթափերով և լեռնահովիտներով ձևավորված տվյալ գոտում և դրան հարող տարածքներում առկա հարուստ մշակութային ժառանգությունը, լեռնակլիմայաբուժական ռեսուրսները, ձմեռային սպորտի լայն հնարավորությունները բարենպաստ նախադրյալներ են տարածքների հատակագծակառուցվածքային համալիրի առանձնահատկությունների բացահայտմամբ գոտու նպատակային օգտագործման համար [2]:

Տարածքի ամենաբարենպաստ գոտին Եղեգիսի գետահովիտն է, որտեղ 47 *կմ* երկարությամբ Եղեգիս գետը սկիզբ առնելով Վարդենիս և Թեքսար լեռների միաձուլման հատվածում, լեռնագագաթի հարավ-արևելյան լանջի 2800 *մ.* բարձրությունից, Արփային է միանում Վայոց Ձորի մարզի Գետափ գյուղի տարածքում: Գետի առկայությունը դիտարկվող գոտում և Արփայի հարևանությունը արժևորվում է միկրոկլիմայի տեսակետից, ինչպես դրանց հովիտներում ու հարակից տարածքներում գոյություն ունեցող բազմադարյան և ժամանակակից բնակավայրային ցանցով, ճարտարապետական բացառիկ կոթողներով, պատմության ու

մշակույթի վկայություններով, այնպես էլ լեռնային լանդշաֆտի, լեռնային տեսարանների և բնակլիմայական պայմանների բազմազանությամբ:

Եղեգիսի գետահովիտը, սկսած Շատին գյուղից, շատ հարուստ է պատմաճարտարապետական հուշարձաններով, որոնցից վաղ ժամանակներից որոշակիորեն պահպանվել և մեզ է հասել աշխարհիկ և հոգևոր կառույցների արժեքավոր ժառանգություն:

Մոտ 200 *կմ²* տարածքով հյուսիսից՝ Վարդենիսի, հարավից՝ Վայքի լեռնաշղթաներով սահմանազատված գոտուն հատկանշական է լեռնային լանդշաֆտների, կենսաբանական և բնակլիմայական բազմազանության խիստ բնորոշ ներուժը, որտեղ առկա են.

- պատմության, մշակույթի և բնության հուշարձանների բացառիկ արժեքավոր մեծածավալ բացօթյա թանգարան,
- ալպյան, մերձալպյան, լեռնատափաստանային և տափաստանային գոտիներ բնական լանդշաֆտներ,
- բուժման և հանգստի կազմակերպման համար անհրաժեշտ լեռնակլիմայական բարենպաստ պայմաններ՝ եզակի խոտածածկույթներ, վայրի բուսական և կենդանական աշխարհ, հանքային ջրերի հարուստ աղբյուրներ:

Զբոսաշրջության զարգացման տեսակետից հատկապես արժեքավոր են դիտարկվող գոտուց ոչ հեռու գտնվող համաշխարհային ճանաչում ունեցող Նորավանքի (Ամաղուի Նորավանք) վանական համալիրը, որը 13-րդ դ. սկզբին եղել է Սյունիքի և Օրբելյան տոհմի հոգևոր կենտրոնը և որտեղ գործել է նշանավոր քանդակագործ, ճարտարապետ և մանրանկարիչ Մոմիկը, Վայոց Ձորի տարածքում գտնվող քարանձավային դեռևս բավարար չուսումնասիրված հարուստ համակարգի, անհետացման և ավերման վտանգված, հուշարձաններով հարուստ բարձր լեռնային Գնիշիկ և այլ բնակավայրերի առկայությունը:

Այս մոդելի առանձնահատկություններից մեկը պետք է համարել այն հիմնարար մոտեցումը, որ հաշվի առնելով լեռնային տարածքների դյուրին խոցելիությունը, կառուցապատման համար սահմանափակ հնարավորությունները, հիմնախնդիրը դիտարկվում է հողատարածքների զբաղեցման խստիվ սահմանափակման տեսակետում՝ կիրառելով կառուցապատման ժամանակակից ստրուկտուրային, կառուցվածքային հնարավորություններ և ոչ ավանդական մեթոդներ: Դա նպատակաուղղված է լեռնային լանդշաֆտների, եզակի տեսարանների և սակավ հողատարածքների արդյունավետ օգտագործմանը (նկ.):

Համեմատաբար վերջերս՝ 20-րդ դարասկզբից զբոսաշրջությունը դարձել է համամարդկային երևույթ: Վերջին տարիներին աճող դինամիկա է նկատվում նաև Հայաստանում, սակայն հիմնական հանգրվանային կենտրոնը մնում է մայրաքաղաքը, Ծաղկաձորը, Սևանա լճի ափամերձ տարածքները և մասամբ Մարմարիկ, Դալարիկ գետահովիտները, Դիլիջան և Ստեփանավան ուղղությունները: Մեր երկրում ռեկրեացիոն տարածքների քաղաքաշինական յուրացման խորհրդային ժամանակաշրջանում հավասարապես չի բաշխվել ռեսուրսային բավարար հնարավորություններ ունեցող

գոտիներում: Այդ ռեսուրսները լիարժեք չեն օգտագործվել (այսօր էլ գրեթե շարունակվում է նույն մոտեցումը) Սևանի ավազանում, Ձորագետ, Փամբակ, Դեբետ, Աղստև, Ախուրյան, Տավուշ, Խնձորուտ, Ազատ, Եղեգիս, Արփա, Որոտան, Ողջի, Մեղրի գետերի հովիտներում, Շիրակի սարահարթում, Արահածի և այլ գոտիներում: Որոտանի կիրճով անցնող ճոպանուղու, Երևան-Ստեփանակերտ և Գորիս–Տաթև ճանապարհների իրականացմամբ զբոսաշրջության մեծ հոսքեր են սկսվել դեպի Սյունիք, ինչպես նաև Վայոց Ձոր, Արցախ ուղղություններով:



Նկ. Տարածական միջավայրում տեղաշարժերի անկանխատեսելի զարգացումների դինամիկա

Միջազգային առումով տարբեր գիտնականներ զբոսաշրջիկ են համարում յուրաքանչյուրին, ով փոխում է կեցության միջավայրը, և այսօր կարող են զարգանալ տուրիզմի այնպիսի աննախադեպ ձևեր, որոնք իրենց հերթին կպահանջեն ճարտարապետական համապատասխան տարածական միջավայր ստեղծելու անհրաժեշտություն (աղ.):

Այս միտքը հավասարապես վերաբերվում է շրջակա միջավայրին՝ անտառային, ջրային, լեռնային լանդշաֆտներին և բնական մյուս ռեսուրսներին հետևյալ ենթատեքստում.

- ուրբանիզացիան, որպես հասարակության զարգացման անհրաժեշտ պայման, զուգորդվում է գիտատեխնիկական աննախադեպ վերելքով: Վեջինիս արդյունքում ձևավորվում են նեգատիվ երևույթներ (տրանսպորտային լայն միջոցներ, աղմուկ, փոշի, քիմիական նյութեր, մեծ քանակի արտանետումներ և կոշտ թափոններ, անտառահատումներ, կանաչ տարածքների կառուցապատում, օդի, ջրի աղտոտում, հողերի դեգրադացիա) [4]: Կենսունակության սպառված պաշարի վերականգնման խիստ անհրաժեշտությամբ մարդը ձգտում է դեպի բնություն՝ զգացմունքային էներգիայի հավիտենական աղբյուրը, թվարկված բացասական երևույթներն իր հետ տանելով դեպի իր իսկ կենսառեսուրսների բնական ապաստանը: Անտեսելով ապագայի գաղափարը, նա անխնա սպառում է դարերով ձևավորված բնական հարստությունը:

Զբոսաշրջության զարգացման ուղղությունները

Տուրիզմի զարգացման խմբերը	*Տուրիզմի տեսակները*
Բնական	Գիտաճանաչողական Մարզական Էկոլոգիական Սանատոր–կուրորտային, առողջարանային Բնակչության զանգվածային հանգիստ Առողջության վերականգնման
Պատմաճարտարապետական	Մարզական - ճանաչողական Գիտաճանաչողական Կրոնական
Էթնոմշակութային	Էթնոտուրիզմ Ընտանեկան Գյուղական Գիտաճանաչողական
Անկանխատեսելի	Մեզ շրջապատող իրական տարածական միջավայրից դուրս և այլ

Բնական նախադրյալների առումով, գիտաճանաչողական, մարզական և էկոլոգիական զբոսաշրջության զարգացման տեսանկյունից կարևոր է մարզի լանդշաֆտային բազմազանությունը: Այստեղ հանդիպում են վերընթաց լանդշաֆտային բոլոր գոտիները՝ անապատա - կիսաանապատայինից (Արենի - Գետափ) մինչև ձյունամերձ (3522 *մ*, Վարդենիսի լեռների ջրբաժանային գոտի) տարածքները [3]:

Մարզի գլխավոր բնական հարստությունը, թերևս, համաշխարհային ճանաչում ունեցող Ջերմուկի հանքային աղբյուրներն են՝ Արփայի վերին հոսանքներում: Ջերմուկի նախկին՝ արևմտյան ճանապարհի երկայնքով ու հարակից տարածքներում ուշագրավ լեռնային լանդշաֆտները բազմաբովանդակ են իրենց ուղղաձիգ ժայռաբեկորներով, քարանձավներով, բուսական աշխարհի բազմազանությամբ, լեռնային բուժիչ օդով և այս համալիրը վրանային տուրիզմի, ինչպես նաև ձմեռային սպորտին նվիրված տուրիզմի լավ հնարավորություն են ընձեռում՝ հաստ ձյունածածկույթի և արևոտ օրերի մեծ քանակության շնորհիվ:

Գնիշիկ գետակի հովիտը – հայտնի է կարստային քարանձավներով, եզակի բուսականությամբ, դեղաբույսերով, ուտելու, համեմունքային, կերային և դեկորատիվ բույսերով, վայրի պտղատուներով, լեռնային վայրի կենդանիներիով (մուֆլոն), թիթեռների հազվագյուտ տեսակներով (դրանց նկատմամբ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում իտալացիները, որն արտահայտվում է իրենց կողմից իսկ անկառավարելի արտահանությամբ), թռչունների բազմազանությամբ: Համայնքի տարածքում առկա են ֆելզիտային չափազանց

ինքնատիպ հանքաքարերի պաշարներ, որոնք ներկայումս շահագործվում են չափավոր, ինչպես նաև ստալագմիտներով և ստալագնատներով ձևավորված յուրօրինակ բնական հուշարձաններ: Մեր հանրապետությունում Վայոց Ձորի մարզն ամենահարուստն է քարանձավներով՝ մասնավորապես Եղեգնաձորի և Վայքի տարածաշրջանը: Վայքի լեռների հյուսիսահայաց լանջերին են գտնվում նշանավոր Արջերի, Մոզրովի քարանձավները, իսկ Մագիլինը՝ Գնիշիկի հովտում:

Յուրօրինակ լեռնագագաթները, լեռնազանգվածային լանդշաֆտները ևս կարող են դասվել բնական հուշարձանների շարքին ու օժտված են տուրիզմի տեսանկյունից գրավչության մեծ պաշարով, որը մեզ, բնիկներիս համար առօրեական է, սակայն չափազանց ուշագրավ՝ զբոսաշրջիկների համար: Յուրօրինակ բնական հուշարձան է Վայոցսար հանգած հրաբուխը՝ Կարմրաշեն գյուղից հարավ-արևմուտք, որն ունի ծովի մակերևույթից 2581 *մ* բարձրություն, հատած կոնի տեսքով մոտ 125 *մ* խորությամբ ձագարաձև խառնարանով [5]:

Մարզի բնությունն ուշագրավ է նաև ռելիեֆի մի շարք յուրատիպ տեսակներով՝ մասնավորապես , այունաձև բազալտային առանձնացումներն Արփայի հովտում (Ջերմուկի կիրճ, Ջերմուկ - Գնդեվազ), նշանավոր Վարդանի ժայռը՝ Կեչուտի ջրամբարից ոչ հեռու (50...60 *մ* բարձրությամբ ժայռաբեկոր, որի վրա, կախված դիտման կետի ընտրությունից, կարելի է տեսնել Հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանի բնական ժայռապատկերը), Ջերմուկի կիրճի արդեն հիշատակված յուրօրինակ ռելիեֆահորինվածքային ձևերը, Նորավանքի վանական համալիրի շրջակայքում գտնվող ուշ պալեոզոյան ժամանակի կարմրավուն ժայռերը, բազմաթիվ հրաբխային խառնարաններ Եղեգիսի գետահովտի բարձրադիր մասերում:

Եկեղեցիներից, վանքերից, վանական համալիրներից նշանավոր են Խաչիկի Խոտակերաց (9-րդ դ.), Արատեսի(11-13-րդ դդ.) վանքերը, Արենիի Աստվածածին (13-րդ դ.), Ալայազի Ձորաց և Սուրբ Նշան (13-րդ դ.) եկեղեցիները, Մարտիրոսի վիմափոր եկեղեցին (13-րդ դ.), Ցաղացքարի (10-11-րդ դդ.), Թանադե (13-րդ դ, ենթադրվում է, որ այստեղ է գործել Գլաձորի համալսարանը, Հերհերի Սուրբ Սիոն (10-13-րդ դդ.), Վերնաշենի Սպիտակավոր, Աստվածածին (12-13-րդ դդ.) վանքերը, Գնդեվանքը (10-րդ դ.): ՈՒշ միջնադարից պահպանվել են Շատինի, Հերմոնի (17-րդ դ.), Արկազի Սուրբ Խաչ (17-19 –րդ դդ.) վանքերը [3]:

Վայոց Ձորի գլխավոր ճարտարապետական գլուխգործոց Նորավանքի (Ամաղուի Նորավանք, 13-14 դդ) վանական համալիրը գտնվում է անդրնդախոր կիրճի հյուսիսային կողմի դժվարամատչելի դարավանդի վրա՝ Արենի գուղից մոտ 8կմ հարավ: Նորավանքը 13 դ. սկզբին եղել է Սյունիք աշխարհի հոգևոր կենտրոնը, Օրբելյան իշխանական տան տոհմական տապանատունը: Ներկայումս Նորավանքը զբոսաշրջիկների կողմից Վայոց Ձորի ամենից շատ այցելվող ճարտարապետական հուշարձանային համալիրն է:

Տեղի ժողովրդական դարավոր ավանդույթները, բնակչության էթնոմշակութային առանձնահատկությունները կարող են խթան հանդիսանալ տուրիզմի ոչ ավանդական ձևերի

ամրապնդմանը: Մասնավորապես լայն հնարավորություններ կան հիմնավոր ներդնելու էքստրեմալ (Սուլեմայի լեռնանցք՝ ձմեռային պայմաններում), ճանաչողական, գյուղական, էթնոտուրիզմի ընտանեկան ձևերը՝ մշակույթին, բնական ժառանգությանը, կենցաղի ու տնտեսավարման առանձնահատկություններին ծանոթանալու նպատակով իրականացվող ճանապարհորդությունների զարգացման և փոխադարձ ճանաչողականության բարձրացման համար:

А.С. Карамян

ЗНАЧЕНИЕ РАЗВИТИЯ ТУРИЗМА В ПРОЦЕССЕ ОРГАНИЗАЦИИ АРХИТЕКТУРНО-ГРАДОСТРОИТЕЛЬНОЙ СРЕДЫ ГОРНЫХ РЕГИОНОВ

Рассматриваются вопросы интеграции слабоосвоенных горных зон с интенсивно застроенными территориями путем их градостроительной организации и архитектурного развития. Развитие туризма, как важный фактор развития пространственной среды, во многом может способствовать осуществлению стратегии урбанизации и эффективного использования периферийных территорий Армении - горной страны.

Ключевые слова: *слабоосвоенность, интенсивное развитие, высокогорная зона, природно-культурное наследие, горный ландшафт, больнеологическое лечение, легкоуязвимый, архитектурные памятники*

A.S. Karamyan

IMPORTANCE OF TOURISM IN THE ORGANIZATION OF URBAN ARCHITECTURAL ENVIRONMENT OF THE MOUNTAIN REGIONS

The issues of integration of poorly developed mountain areas with intensively urbanized areas through the development of architectural and urban development activities. The development of tourism as an important factor in the organization of the space environment, can do much to facilitate the implementation of the strategy of urbanization and more efficiently use the peripheral areas of Armenia - mountainous country.

Keywords: *poorly developed, intensive development, alpine zone, natural heritage, mountainous landscape, spa treatment, thin-skinned, architectural monuments*

Գրականություն

1. **Քարամյան Ա.** Հայաստանի Հանրապետության Մարտունի-Եղեգնաձոր լեռնային գոտու տարածական զարգացման հեռանկարները: ճարտ. թեկն. ... ատենախոս. - Երևան, 2007. - էջ. 26-90:
2. **Бархин М.** Архитектура и человек. Проблемы градостроительства будущего. – М.: Наука, 1979. - С. 5-10.

3. **Մնացականյան Ս.** Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոց/ ՀՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտ. - Երևան, 1960. – էջ. 12-186:
4. Mountains of the World, Sustainable Develoment in Mountain Areas. Thy Need for Adequats Politiqes and Instruments// Mountain Agenda. - Berne, Switzerland, 2002. –P.24-28.
5. **Хамилтон Л., МакМилан Л.** Руководство по планированию и управлению горными охраняемыми территориями/ МСОП – Всемирная комиссия охраны природы (IUCN). - Калифорния, 2004. - С. 2-36.

Աշխատանքն իրականացված է ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ «ՀՀ ճարտարապետական և շինարարական համալիրների կայուն զարգացման ուղիների բացահայտում, ճշգրտում, ներդրման առաջարկությունների և հանձնարարականների մշակում՝ մշտական մոնիտորինգի կիրառմամբ» ծրագրի շրջանակներում:

Քարամյան Անահիտ Սերգեյի, ճ.թ., դոց. *(ՀՀ, ք.Երևան) - ՃՇՀԱՀ, Ճարտարապետական նախագծման և ճարտարապետական միջավայրի դիզայնի ամբիոն, ակադեմիկոս Ալ. Թամանյանի անվ. Ճարտարապետության և շինարարության պրոբլեմային լաբորատորիա, գ.ա., (+374) 10565390, (+374) 91957001, anarchitect@mail.ru:*
Карамян Анаит Сергеевна, к.архит., доц. *(РА, г.Ереван) - НУАСА, кафедра Архитектурного проектирования и дизайна архитектурной среды, проблемная лаборатория Архитектуры и строительства им. академика Ал. Таманяна, н.с (+374) 10565390; (+374) 91957001, anarchitect@mail.ru.*
Karamyan Anahit Sergey, doctor of Philosophy (Ph.D) in Architecture, associate prof. *(RA, Yerevan) - NUACA, chair of Architecture Drafting and Design of Architectural Environment, Research Laboratory of Architecture and Building by Academician Al. Tamanyan, Scientific Researcher (+374) 10581539, (+374) 91957001, anarchitect@mail.ru.*

Ներկայացվել է՝ 02.03.2015թ.
Ընդունվել է տպագրության՝ 09.03.2015թ.